

ՆԱԽԱԳԱՀ ՉՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏ
ՎԵՐԱԴՂԱՐՉԱԻ ՊԵՅՐՈՒԹ

Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ եզրափակեց Յունաստան իր պաշտօնական այ-
ցելութիւնը եւ երկուշեան վերադարձաւ Պէյրուսը:
Նախագահ Լահուտ երէկ յոյն պաշտօնատարներու
հետ քննարկեց տնտեսական, առեւտրական, գրօսաշըր-
ջային եւ զինուորական, ի մասնաւորի հարաւի ակա-
նագերծումին գծով գործակցութեան համաձայնա-
գիրներու գործադրութեան վերաբերեալ հարցեր:

Կէսօրէ ետք, Լահուտ եզրափակիչ ժողով մը գու-
մարեց իր յոյն պաշտօնակիցին՝ Քոսթանթին Սթեֆա-
նովուլոսի հետ, ապա անոնց միացան լիբանանեան
պատուիրակութեան անդամներն ու յոյն նախարար-
ներ:

Յունական պատկերասփիւռի կայանի մը արուած
հարցազրոյցի մը մէջ, ան վերահաստատեց չըջանա-
լին եւ միջազգային պայմաններուն նկատմամբ Լի-
բանանի սկզբունքային կեցուածքները:

«Լիբանան պարզ պետութիւն կամ հայրենիք չէ,
այլ համամարդկային արժէք ներկայացնող առաքե-
լութիւն, սիրոյ, հանդուրժողութեան եւ զոյակցու-
թեան տիպար, որովհետեւ հակառակ Լիբանանի փոքր
տարածքին եւ չորս միլիոնը չանցնող բնակչութեան,
հոն ներդրանակ եւ համերաշխ կ'ապրին քրիստոնեայ
եւ իսլամ 17 համայնքներ», ըսաւ ան:

Հարցումի մը պատասխանելով, նախագահ Լահուտ
վերահաստատեց, թէ Լիբանանեան դիմադրութիւնն
է, որ խորայնեան լոնազրաւումէն ազատագրած է
հարաւն ու արեւմտեան Պեքաան, իսկ այս առնչու-
թեամբ միջազգային որոշումներն ու իսրայէլի վրայ
բանեցուած ճնշումները ոչ մէկ արդիւնք կրցան տալ:

Նախագահ Լահուտ նաեւ ըսաւ, որ ոչ մէկ պատ-
ճառ կայ, որ Միացեալ Նահանգներ յարձակում գոր-
ծեն մէկ կամ աւելի արաբական պետութիւններու
վրայ, որովհետեւ Ուաշինկթըն գիտէ Սեպտեմբեր 11ի
դատապարտելի եւ անընդունելի արարքներուն պա-
տասխանատու կողմը:

Ան նաեւ ըսաւ, որ կարելի չէ իրարու կապել իրենց
հողը՝ իրատիրանալ պահանջող արաբական պետու-
թիւններն ու ահաբեկչական վերջին արարքներն ու
անոնց հեղինակները:

Հանրապետութեան նախագահը նաեւ կոչ ուղղեց
վերակենդանացնելու Միջին Արեւելքի խաղաղութեան
գործընթացը եւ զայն մղելու արդար եւ ամբողջական
լուծումի ուղղութեամբ, Մատրիտի մէջ հաստատուած
սկզբունքներու եւ առաջին հերթին՝ խաղաղութեան
փոխարէն հող սկզբունքին հիմամբ:

ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՁ

ԱՊԻԵԻ – ՉԱՔՍԱՔՕՂՈՒ
ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ ՔՆՆԱՐԿՈՒԵՑԱՆ
ԹՈՒՐԲ – ԱԶԵՐԻԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՊՈՒԱԾ
ՀԱՐՑԵՐ

Եւօրեայ այցելութեան մը համար Անգարա կը
գտնուի Ալրայէյճանի պաշտպանութեան նախարար
Սաֆար Ապիեւ: Ապիեւ իր թուրք պաշտօնակիցին՝
Սապահէտտին Չաքմաքօղլուի հետ քննարկեց թուրք
- ազերիական ռազմական համագործակցութեան հե-
ռանկարները:

Թրքական «Անսառլու» լրատու գործակալութիւնը
հաղորդեց, որ անդրադառնալով Թուրքիա - Ազրպէյ-
ճան տնտեսական յարաբերութիւններուն, Չաքմա-
քօղլու յայտնած է, թէ Պաքու - Թիֆլիս - Ճէյհան
խողովակաշարին առնչուող համաձայնութիւններուն
մեծ մասը արդէն պատրաստ է: Ան նաեւ անդրադար-
ձած է Ազրպէյճանի մէջ գործող թուրք առեւտրա-
կաններու եւ ընկերութիւններու գործունէութեան:

Լեւոնային Ղարաբաղի տապալակին մասին Չաքմա-
քօղլու ըսած է, թէ «աւելի քան մէկ միլիոն զաղթա-
կաններ կ'ապրին չափազանց դժուար պայմաններու
մէջ», եւ թէ «Թուրքիա միշտ գործով կ'անգնած է
այն ճիգերուն, որոնք կը միտին «Հայաստանը դուրս
բերել Ազրպէյճանի տարածքներէն»:

Իր կարգին, Ապիեւ նշած է, թէ Թուրքիա միշտ
գորակցած է Ազրպէյճանին, եւ թէ Թրքական բանակը
մեծ դեր ունեցած է Ազրպէյճանի բանակին կազմա-
ւորման մէջ:

Ազրպէյճանական «Էյ. Էն. Էս.» պատկերասփիւռի
կայանը իր կարգին յայտնեց, որ հիմնականօրէն ռուս-
մական համագործակցութեան առնչուող Ապիեւ -
Չաքմաքօղլու բանակցութիւններու մասնաժամանու-
թիւնները չեն հրապարակուած: «Էյ. Էն. Էս.» նաեւ
նշեց, թէ «Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ դուլութիւն
ունեցող ռազմական համագործակցութեան նման»
յարաբերութիւն մը պիտի ստեղծուի Ազրպէյճանի եւ
Լիբանանի միջեւ, եւ այս գծով համաձայնագիր պիտի
Թուրքիոյ միջեւ, եւ այս գծով համաձայնագիր պիտի
ստորագրուի մինչեւ տարեկրթը: Ըստ այս համաձայ-
նագրերին՝ Թուրքիա զինուորական սարքեր պիտի
տրամադրէ Ազրպէյճանին, եւ պիտի արդիականացնէ
անոր բանակը:

ՏՈՆԸԼՏ ՌԱՄՍՖԵԼՏ ԾՈՅԻ ԵՐԿԻՐՆԵՐ ԻՐ ՇՐՋԱՊՏՈՅՏԻՆ ՍԿՍԱԻ

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՅԼԵՐՈՒ
ԿԸ ԴԻՄԵՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԻՈՅ ՄԷՁ
ՕԹՕՊԻԻՄԻ ՄԱՀԱՅՈՒ ԱՐԿԱԾ ԹԵՆԸՍԻԻ ՄԷՁ

Մ. Նահանգներու
պաշտպանութեան
նախարար Տոնրլտ
Ռամսֆելտ երէկ Մոնթ-
երկիրներուն մէջ
շրջապտոյտի մը ձեռ-
նարկեց՝ ահաբեկչու-
թեան դէմ պատերապ-
մի մը գծով պօրակցու-
թիւն ապահովելու
առաջադրութեամբ.
մինչ Մ. Նահանգնե-
րու մէջ միջքաղաքա-
լին օթոպիւններու մե-
ծագոյն ցանցին աշ-
խատանքները կ'առ-
կախուէին մահացու
արկածէ մը ետք.
որուն պատճառը վա-
րորդին դէմ յարձա-
կում մըն էր:

Ամերիկացի պաշ-
տօնատարներ յայտ-
նած են, որ օթոպիւնին
դէմ յարձակումը,
որուն ընթացքին ճամ-
բորդ մը վարորդը
սպաննած է, նախնա-
կան գնահատումով կը
թուի «ահաբեկչու-
թեան կապուած չըլ-
լալ», սակայն երկրին
տարածքին օթոպիւն-
ներու աշխատանքին
անկախումը ցուցանիշ
էր ամերիկեան մտա-
վախութեանց եւ մտա-
հոգութեանց:

«Կրէյնառնտ



Չախցախուած օթոպիւր:

Լայնը» ըսած է, թէ
առնուապն 10 քոհ ար-
ձանագրուած է արկա-
ծին պատճառով եւ թէ
կէս օրուան առկախու-
մը նախապնուշական
քայլ մըն է: Անոր
օթոպիւնները տարե-
կան 25 միլիոն ճամ-
բորդ կը փոխադրեն:
Յարձակումը գործած
ճամբորդը խրուաթա-
կան անցագիր ունէր:
Նախագահ Ճորձ
Պուշի վարչակարգը
յարձակումներէն ի

վեր պետական գրա-
սենեակներու, օդա-
կայաններու եւ ներ-
քին փոխադրամիջոց-
ներու ցանցերու շուրջ
ապահովութեան մի-
ջոցառումները ամ-
րապնդած է, միաժա-
մանակ հրահանգելով
ամերիկեան ոմբածիգ
օդանաւերու, ռազմա-
նաւերու մասնաշա-
տուկ քոմանտօ ուժե-
րու, որ Աֆղանիստա-
նի շրջանը մեկնին:
Զինուորական նո-

ԻԲԵՐԷ ԸԱԿԱԴԱՐՁՈՒԹԻՆ ԸՐԵԱԿԱՆ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՍԸ ՎՐԱՅ
ԿԱՏԱՐՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ
ՆԵՐԻՆՈՒԺԵՑ ԿԱԶԱ. ԱԻԵԼԻ ՔԱՆ 6
ՊԱՂԵՍՏԻՆՅՈՒՆԵՐ ՍՊԱՆՆՈՒԵՑԱՆ

Իսրայէլեան ուժերը
աւելի քան վեց պաղես-
տինցիներ սպաննեցին
Կազալի շրջաններէն մէ-
կուն մէջ, ուր ներխու-
ժած էին Երեքշարթի զի-
շէր, իրրեւ հակադար-
ձութիւն իսլամական
զինեալներու գործած
մէկ յարձակումին՝ հը-
րէական բնակեցման
վայրի մը վրայ:

Վայրագութեան նոր
ալիքը մահացու հարուած
տուած արդէն իսկ խա-
խուռ պինդադրլին ու
միամեայ բախումներուն
վերջ տալու ամերիկեան
ճիգերուն:

Իսրայէլեան բանակին
կողմէ հրապարակուած
յայտարարութիւն մը
յայտնեց, որ իսրայէլեան
ուժերը կը մաքրագործեն
այն շրջանը, ուր կէ
«ահաբեկիչները» Ալէյ
Սինայ բնակեցման վայ-
րը թափանցած էին: Իս-
րայէլացի զինուորները
քանդեցին պաղեստին-
եան ոստիկանութեան
կեդրոնները, որոնց մօ-
տէն անցած էին իսլամա-
կան զինեալները: Յայ-
տարարութիւնը կ'աւելցը-
նէր, որ բանակին ձեռ-
նարկած գործողութեան
նպատակն է բնակեցման
վայրերուն մօտակայ
շրջաններէն հեռացնել
պաղեստինեան ահաբեկ-
չութիւններու սպանոնա-



Պաղեստինցի զինեալներ կոիկ ընթացքին:

լիքը: Իսրայէլեան բանա-
կը գործողութիւնը կը
կատարէ պաղեստինեան
իշխանութեան հակակշի-
ռին ենթակայ հոգերու
վրայ:

Իսլամական զինեալ-
ներ Երեքշարթի զիշէր յա-
ջողած էին թափանցել
Ալէյ Սինայ բնակեցման
վայրը, ուր սպաննեցին 19
տարեկան իսրայէլացի
կին զինուոր մը եւ անոր
ընկերը: Յարձակումին
ընթացքին վիրաւորուած
էին նաեւ 15 իսրայէլացի-
ներ: Սպաննուեցան նա-
եւ իսլամական երկու
զինեալներ: Յարձակու-
մէն քանի մը ժամ ետք,
իսրայէլեան պոլստոգրի-
ներ եւ հրասայլեր ներ-
խուժեցին Կազալի հիւսի-
սային շրջանը:

Պաղեստինեան իշխա-

րագոյն քայլով մը բա-
նակը 1000 զինուոր
խիստ պատրաստ վի-
ճակի մէջ դրած է Կեդ-
րոնական Ասիոյ մէջ
հաստատուելու նպա-
տակով, ըստ պաշտ-
պանութեան մարզի
պաշտօնատարի մը:

ՕԹԱՆԻ մէկ բանբե-

Շարը՝ էջ 10

ՌՈՒՄԻՈՅ ՍՊԱՅԱԿՈՅՏԻ
ՊԵՏԸ ԱՅՅԵԼԵՑ ԳԻՄՐԻԻ
ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆ

Ռուսիոյ սպայակոյտի պետ Անաթոլի Քվաշնինի
զխաւորած պատուիրակութիւնը, որ Հայաստան կը
գտնուէր երկօրեայ այցելութեան մը համար, երէկ
այցելեց Գիւմրիի մէջ տեղակայուած ռուսական ու-
ժերու ռազմակայան:

Քաղաքի մուտքին ռուս զինուորականը եւ անոր
ընկերակցող Հայաստանի պաշտպանութեան փոխ նա-
խարար զօր. Միքայէլ Յարութիւնեանը դիմաւորե-
ցին Շիրակի մարզպետը, Գիւմրիի քաղաքապետը, եւ
հայ եւ ռուս բարձրաստիճան զինուորականներ: Ռու-
սական պատուիրակութիւնը ներկայ գտնուեցաւ հա-
կաօղային զօրքերու օդային տարածքի պահպանու-
թեան փորձերուն: Իր արտասանած խօսքին մէջ զօր.
Քվաշնին նշեց, որ հայ-թրքական սահմանին վրայ
տեղակայուած զօրքերու պարտականութիւնը չափա-
զանց կարեւոր է, մանաւանդ ԱՊՀի երկիրներ թմրե-
ցուցիչի մաքսանկէզութեան դէմ պայքարի ծիրէն
ներս:

Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար
Միքայէլ Յարութիւնեան եւ Անաթոլի Քվաշնին ստո-
րադրեցին Քվաշնինի Հայաստան այցելութեան ար-
դիւնքներուն շուրջ արձանագրութիւն մը: Հանդի-

Շարը՝ էջ 3

ԿՈՒԼԻԵԻ ԿԸ ՀԱԿԱԴԱՐՁԷ
ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան
վերջերս յրազրողներու հետ հանդիպումի մը
ընթացքին յայտնած էր, թէ Լեւոնային Ղարա-
բաղի մէջ պատերազմի վերսկսման պարագա-
յին, նախալարձակ կողմը պարտութիւն պիտի
կրէ:

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար
Վիլայէթ Կուլիեւ անդրադառնալով Քոչարեա-
նի յայտարարութեան յայտնած է, թէ «առաջին
անգամը չէ, որ հայեր նման յայտարարութիւն-
ներ կ'ընեն»: Կուլիեւ նաեւ նշած է. «Ես կը հա-
ւատամ, որ Ազրպէյճան ի վերջոյ պիտի գրաւէ
Ղարաբաղը, եւ ասիկա օտար երկրի մը դէմ
զինուորական ներխուժում պիտի չնկատուի,
այլ բռնագրաւուած տարածքներու ապստա-
րում»: Միւս կողմէ, Կուլիեւ համաձայն
գտնուած է նախագահ Քոչարեանի մէկ այլ յայ-
տարարութեան, թէ Լեւոնային Ղարաբաղի տագ-
նապը պէտք է լուծուի բանակցութիւններու մի-
ջոցով:

Շարը՝ էջ 2

«Էլ Ասատ» մատենադարանի արաբական գրքի 17րդ մեծ ցուցահանդես-վաճառքի հայկական բաժինները, «Արեւելք» հրատարակչատան (Տար Էլ Մաշրեք) Հայկական տաղաւարը եւ «Տար Էլ Հիւարի» տաղաւարն ներս հայկական նիւթերու յատուկ անկիւնը:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ՌՈՒՍ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

29 Սեպտեմբերին, ուսու լրագրողներու հետ կատարուած հանդիպումի մը ընթացքին, Հայաստանի նախագահ Ռոպէյրթ Քոչարեան պատասխանած է հայ-ուսական յարաբերութեան, չընդհանրելի, զարաբարեան եւ այլ հարցերու վերաբերող անոնց հարցումներուն:

Նախագահ Քոչարեան ըսած է, թէ ինք անկեղծօրէն շահագրգռուած է, որ ուսական լրատուամիջոցները ճշգրիտ պատկերացում ունենան Հայաստանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն մասին: Ան նաեւ նշած է, թէ ինք շահագրգռուած է որ լրատուամիջոցները արտապոլացնեն երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող սերտ յարաբերութիւնները: Պատասխանելով Ռուսիա - Պիելուսիա միութեան Հայաստանի անդամակցութեան հարցին, նախագահ Քոչարեան ըսած է, թէ այդ քննարկելի օրակարգ է Հայաստանի համար, որովհետեւ չկան ընդհանուր սահմաններ եւ չկան նաեւ փոխադարձ շահագրգռութիւններ:

Բարձր գնահատելով Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի Հայաստան ապրելութիւնը, նախագահ Քոչարեան նշած է, թէ երկուստեք կայ փոխադարձ հետաքրքրութիւն եւ աւելի հետեւողական ձեւով աշխատելու ցանկութիւն:

Ա. ՈՍԿԱՆԵԱՆ ԵՒ Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱԶԱՏ ԿԸ ԿԱՑՈՒՑՈՒԻՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՈՆՆԵՐԷՆ

Հայաստանի նախագահ Ռոպէյրթ Քոչարեան 29 Սեպտեմբերին հրամանագիր մը ստորագրած է Աշոտ Ոսկանեանին Գերմանիոյ մէջ Հայաստանի դեսպանի պարտականութիւններէն ազատ կացուցելու մասին:

Նոյն օրուան մէջ այլ հրամանագրով Արմէն Պետրոսեան ազատ կացուցուած է Զոհնաստանի, համատեղութեան կարգով նաեւ Կիպրոսի, իտալական Սլովենիոյ, Ալպանիոյ եւ Եւրոպայի մէջ Հայաստանի դեսպանի պարտականութիւններէն:

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԳԻՒՄՐԻՒ ՄԵՋ

Յառաջիկայ երկու - երեք տարուան ընթացքին Գիւմրիի մէջ պիտի կառուցուի մարզական մեծ համալիր մը, որուն արժէքը մօտ 12 միլիոն տոլար է: «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին իրականացնելիք այս ծրագիրը պիտի ֆինանսաւորէ Յրանսայի մէջ ապրող կաթողիկէ հայերու «Ալիանս Արմենի» մարզական կազմակերպութիւնը:

Ծրագիրը ընդամենը քանի մը ամսուան պատմութիւն ունի: Արդէն իսկ համաձայնութիւն ձեռք բերուած է «Ալիանս»-ին հետ եւ ստացուած է այն կառույցներուն ցանկը, որոնք պէտք է ընդգրկուին համալիրին մէջ:

Շիրակի մարզպետարանի մարզական բաժանմունքին տուեալներով, մարզական համալիրը պիտի գրաւէ 20 հեկտար տարածութիւն: Ան պիտի ունենայ 5000 նստատեղով ծածկուած մարզադաշտ, երկու բաց մարզադաշտեր, 1000 հոգիինց խաղերու սրահ, ծանրաբարձութեան եւ ըմբշամարտի սրահներ, վերականգնողական կեդրոն, լողաւազան եւ այլն:

«Ալիանս Արմենի» ծրագրած է ստեղծել եւ ֆինանսաւորել ֆութպոլի խումբ մը, որ համալրուելով աշխարհի բարձրորակ մարզիկներով՝ արժանիօրէն պիտի ներկայացնէ Հայաստանը միջազգային դաշտերու վրայ:

ԼՎՈՎԻ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԿԱՆԳԻ ՀԱՅԱՏԱՌ ՂՓՁԱՂԵՐԷՆ ՍԱՀՄՈՍԱԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

Ղազարաստանի եւ իւրիշ լուսանկարիչներու մէջ Հայաստանի դեսպանատունը «Տեղի - Ի - Ղազար» եւրասիական ուսումնասիրութիւններու կեդրոնին հետ գործակցարար հրատարակած է Լվովի Լուսիկ Սարկաւազի հայաստան դիւանարէն Սոցիալիզմի ձեռնարկը երկու տարբերակներով՝ Զարադուստի թանգարանի (Բարսեղով, Լեհաստան, 1575) եւ աւստրիական ազգային գրադարանի (Վիեննա, 1580) օրինակներով:

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած այս հրատարակութիւնը կարեւոր է իրեն հայաստան դիւանարէնի հազարամյակ պատմական արժէք ներկայացնող աշխատութիւն, ինչպէս նաեւ՝ իրեն Աստուածաշունչի իւրօրինակ հրատարակութիւն:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԹԻՄՆԵՐՈՒ ԱՃ

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներուն համաձայն, այս տարուան նոյն ժամանակաշրջանի համեմատութեամբ, Հայաստանի մէջ աճած է ամուսնութիւններուն եւ ամուսնալուծումներուն թիւը:

Ամուսնութիւններուն թիւը աճած է 10,9 առ հարիւրով եւ կազմած է 5,870: Ամուսնալուծումները իրենց պատկուած են եւ հասած՝ 944-ի:

Այսինքն՝ առաջին վեց ամսուան ընթացքին իւրաքանչիւր 1000 նոր կազմաւորուող ամուսնացած զույգին բաժին ինկած է 161 ամուսնալուծում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԶԵՏԵՂՈՒԵՑԱԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆՈՐ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՀԻՄՆԱՔԱՐԸ

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան Մայքլ Լեմըն 30 Սեպտեմբերին Երեւանեան լիճին մօտակայքը դրաւ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նոր դեսպանատան հիմնաքարը: Մ. Լեմընի համաձայն, դեսպանատան կառուցման վայրին ընտրութիւնը պատահականօրէն չէ եղած, այլ այդ շրջանը ընտրուած է, որովհետեւ հոնկէ Արարատը կ'երեւի: «Ես չեմ ուզեր խօսիլ Արարատի խորհրդանշական արժէքին մասին, անիկա իսկապէս շատ գեղեցիկ է՝ յատկապէս երբ ամպերով ծածկուած է», ըսաւ նախկին դեսպանը:

Հիմնաքարի գետնըման հանդիսութեան ներկայ էին Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչները, Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ հանրապետական կրօնական գործիչները: Հանդիսութեան ընթացքին Լեմըն շնորհա-

կալութիւն յայտնեց Հայաստանի նախագահին, վարչապետին եւ Երեւանի քաղաքապետին՝ նոր դեսպանատան վայրին ընտրութեան իրենց ցուցաբերած օժանդակութեան համար: Ան նշեց, թէ ամերիկեան կառավարութեան ներկայացուցիչներուն հետ այս համագործակցութիւնը կարտացոլացնէ, թէ ինչպիսի նուաճումներ կարելի է ունենալ:

Գարեգին Բ. կաթողիկոսը օրհնեց կառուցուելիք դեսպանատան հիմնաքարը:

Յայտնեց, թէ ամերիկեան կառավարութեան կողմէ 99 տարուան համար վարձուած 20 հեկտար տարածքին համար արդէն վճարուած է 2 միլիոն տոլար: Կազմուած է նաեւ կառուցութեան շինութիւններուն յատկապիծը, որ պիտի գրաւէ տարածքին 40 առ հարիւրը, ուր դեսպանատան կեդրոնական գրասենեակին կողքին պիտի տեղադրուին ամերիկեան այլ կազմակերպութիւն-

ներու գրասենեակներ, ամերիկեան ռադիո-վայրի հետեւակի ներկայացուցիչներու նստավայրը, ինչպէս նաեւ՝ խանութներ եւ պահեստներ:

Շինութիւններուն համար պիտի օգտագործուի տեղի քարը: Շինարարական աշխատանքները պիտի տեւեն 3 տարի, եւ այդ աշխատանքներուն համար նախատեսուած է ծախսել շուրջ 80 միլիոն տոլար, որ կ'ենթադրուի որ աւելինայ: Ըստ Երեւանի ղեկավար ճարտարապետ Նարեկ Սարգսեանի, ամերիկեան կողմին ներկայացուցած նախագիծին շէնքերու արտաքին տեսքին առնչուող բաժինը ստեղծած է որոշ անհամաձայնութիւններ, որովհետեւ անոնք չեն համապատասխանի հայկական ճարտարապետական առանձնայատկութիւններուն: Ըստ անոր, ամերիկեան կողմը մէկ ամսուան ընթացքին պիտի ներկայացնէ նոր նախագիծ մը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՆԻՍՏԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի 23-էն 28 Սեպտեմբերին կայացած աշխարհային նստաշրջանին ընթացքին հայկական պատուիրակութիւնը ձեռք բերած է շարք մը պայմանաւորուածութիւններ:

Պատուիրակութեան նախագահ Յովհաննէս Յովհաննիսեան յայտնեց, որ 20-էն 22 Հոկտեմբեր Հայաստանի մէջ տեղի պիտի ունենայ Եւրոպական խորհուրդի մշակույթի, գիտութեան եւ կրթութեան յանձնաժողովի արտակարգ նիստը, որուն պիտի մասնակցին մօտ 40 խորհրդարանականներ:

Ասոր զուգահեռ, Հայաստան պիտի հասնին Եւրոպական խորհուրդի մոնիթորինգի յանձնաժողովին անդամները, ինչպէս նաեւ՝ գաղթականներու յանձնաժողովի անդամներէն խումբ մը, որ պիտի ուսումնասիրէ գաղթականներուն վիճակը Հայաստանի մէջ:

2002 թուականին առաջին կիսամյակին կը նախատեսուի Հայաստանի մէջ կազմակերպել Եւրոպական խորհուրդի կենսոլորտի եւ բնապահպանութեան յանձնաժողովին արտակարգ նիստը, եւ յատուկ համագումար մը՝ նուիրուած Սեւանի խնդիրին:

ԱՐՑԱՆ

ԳԵՐՄԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

ԿԸ ԿԱՌՈՒՑԷ ՄՂՆԱԽ ԳԻՒՂԻ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Գերմանիոյ տեղական մարմինի նախաձեռնութեամբ, շուրջ 20 հազար հաշուող գերմանահայ համայնքը ֆինանսաւորած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ասկերանի շրջանի Սիւնա գիւղի ջրամատակարարման համակարգի ստեղծման ծրագիրը:

Հիմնադրամի գործադիր տնօրէն Վահան Տէր Ղեւոնդեանի համաձայն, կառուցուած է երեք փլումբեր երկայնք ունեցող մայր ջրատար, ջրահաւաք աւաղան, 150 խորանարթ մեթր տարողութեամբ ջրամբար եւ չորս փլումբերնոց ներքին ցանց:

Սիւնա լեռնային գիւղը կը գտնուի Ասկերանէն 33 փլումբեր հարաւ, ծովու մակերեսէն 1100 մեթր բարձրութեան վրայ եւ ունի 300 բնակիչ:

Գերմանիոյ հայ համայնքին յատկացուցած միջոցներով Արցախի մէջ կառուցուած են նաեւ Մարտակերտի շրջանի Ակնաբերդ գիւղի ջրատարը եւ Ստեփանակերտի վարարակն աղբիւրն ու ջրագիծը:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԺԻՒՂԸ

ԲԱՅՈՒԵՑԱԻ ՎԱՐՇԱԽԱՅԻ ՄԵՋ

6-էն 8 Սեպտեմբերին Լեհաստանի Քրիւնիցա շրջանի դիւանապետական հանրայայտ առեւտրական համալիրումն աշխարհի 40 երկիրներու շուրջ 3000 ընկերութիւններու եւ հաստատութիւններու կարգին իր մասնակցութիւնը բերած է նաեւ Հայաստանի կառավարական պատուիրակութիւնը, արտադրական ենթակառուցներու համակարգող նախարար Դաւիթ Զալոյեանի ղեկավարութեամբ:

Հայաստանի Արդարադատութեան եւ Գործարարներու Միութեան արտասահմանի մէջ առեւտրի գրասենեակներ կազմակերպող Աշոտ Մուքոյեանի համաձայն, համախմբման մասնակցած են հայաստանեան 15 ընկերութիւններ, որոնց կարգին՝ «Վիլիս», «Կոստալ», «Վեդի Ալթ», «Ջերմուկ Կրուկ», Արարատի, Արտաշատի պահածոները, Երեւանի ոսկերչական գործարանները, «Կրակո Քեմիս», «Կրակո Թուրք»-ն եւ «Մակուս եւ Վալիս»: Անոնց նպատակն էր ապահովել Հայաստանի մէջ արտադրուող եւ միջազգային շաքարիչներու համապատասխանող արտադրութիւնները արտասահմանեան շուկային մէջ տարածելը:

Այս համախմբումին ընթացքին կազմակերպուած են նաեւ հայկական արտադրութիւններու ցուցադրութիւն եւ հիւրասիրութիւն:

11-էն 14 Սեպտեմբերին վերոյիշեալ արտադրութիւնները ցուցադրուած են նաեւ Փոզնանի «Փոլոկ-իո Ֆուտ 2001» ստանդարտին, որուն մասնակցած են 35 երկիրներէ 3500 ընկերութիւններ: Հայ գործարաններն ու հայկական ընկերութիւնները այս ստանդարտին ընթացքին զանազան համաձայնութիւններ կնքած են զանազան մարզերու մէջ, որոնց իրենք արդիւնք՝ արդէն Հայաստան մտած են մեծ քանակութեամբ նիւթեր եւ արտադրատեսակներ:

Ա. Մուքոյեան տեղեկացուցած է, թէ զանազան երկիրներու մէջ սկսած է հայկական արտադրութիւններու գրասենեակներու ստեղծումը: Որոնք կը զբաղին հայկական արտադրութիւններու ծանուցումով, արտահանման եւ համագործակցութեան հաստատման հարցերով: Հայկական արտադրութիւններու միջազգային գրասենեակի առաջին մասնաճիւղը՝ «Արարատ Էքսպո Առեւտրի Տեղ» անունով, բացուեցաւ վարչաւայրի մէջ: Մինչեւ տարեկան այսպիսի ընկերութիւններ պիտի լացուին նաեւ Գերմանիոյ, Անգլիոյ եւ Յիւսսայի մէջ:

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԷՆ

HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA



ՄԵԼՔՈՆԵՄՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ELECTRIC MOTORS REDUCTION GEAR MOTORS A. C. & D. C. REDUCTION GEARS VACUUM PUMPS WATER PUMPS POWER TOOLS ELECTRIC WINCHES PNEUMATIC WINCHES STAINLESS ELECTRODES	PNEUMATIC DIRECTIONAL VALVES SOLENOID VALVES HYDRAULIC DIRECTIONAL VALVES SOLENOID VALVES RELIEF VALVES PUMPS & PISTONS
---	--

**ԵՒ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԻՏՐԱԼԻՔ, ՓՆԵՍՄԱԹԻՔ
ՈՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՄՈԹԵՕՐԵՐ,ՄԱՏՁԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ:**

**Chromo St. Tel.: 01-254144,
01-254145, 01-254134,
03-666840, 03-666850.**



• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարահանումներ
Հեռ. 01-266866
Եւ 03-695399

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՈՒ
• Քարտուղարուի
ւր աշխատանքի կա-
րիք ունի: Հեռ. 03 -
751787:

**ՇԻՐԱԿ
ՀԱՐԱՆԵԱՆ ԲԱՐԵՐ**



ՄԱՐԴ ԿՈՒՄԱՆԻ ՍՈՒՍ ԿՈՒՄԱՆԻ
ՀՀ 449533 - 445829

**ՊԻՊԼՈՍ ՀԻՄՆԱԿ
ԱՐՀԵՍՏԻՑ ՀԻՄՆԱԿ**

**ՊԻՊԼՈՍ ՀԻՄՆԱԿ
ԱՐՀԵՍՏԻՑ ՀԻՄՆԱԿ**

**ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ...
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

ԹԵՔՆԻԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - BT

- Հաշուապահութիւն եւ համակարգային գիտութիւններ
- Վաճառք եւ առեւտրական յարաբերութիւններ
- Ինքնաշարժի մեքանիք
- Ելքային ծրագրեր
- Մանկավարժութիւն

ԹԵՔՆԻԿԱԿԱՆ ԿՈՄՍՏՐԱԿՏՈՒԹՅՈՒՆ - TS

- Փորձառական եւ կիրառական հաշուապահութիւն
- Վարչական համակարգային գիտութիւններ
- Տնօրէնութիւն եւ առեւտրական աշխատանքներ
- Ելքային ծրագրեր

ԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐՈՒ ԱՐՀԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, TPA

- Ընդհանուր հաշուապահ
- Գործադիր քարտուղարուի
- Պատասխանատու հաշուապահ
- Ցուցահանձնարարութիւն եւ ձեռնարկագրեր
- Գրասենեակներու հիւրընկալող
- Չայնապահութիւն եւ պատկերաստիկի մոնթաժութիւն
- Ինքնաշարժներու մեքանիք եւ ելքային ծրագրեր
- Ջեռուցելու եւ պողեցնելու մասնագիտական ծիւղ
- Ինքնաշարժներու վնասուածքներու պատրուակ
- Շինարարութեան աշխատանքներու կապալառու
- Կալուածային ծանուցում
- Համակարգիչներու վերանորոգում
- Ելքային ծրագրեր
- Վարչապարտարու
- Շաքարու
- Ելքային ծրագրեր
- Ինքնաշարժներու ելքային ծրագրեր

ԱՆԳԼԵՐԷՆ, ՅԻՄՆԱՐԵՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԼԵՃՈՒՆԵՐ

Կրթական ծրագիրները ուսանող կը պատրաստեն աշխատելու եւ իր քաղաքային համակարգային կրթութիւնը շարունակելու հետեւեալ համակարգային մասնագիտութիւններուն մէջ:

- HOSPITALITY MANAGEMENT - MANAGEMENT
- BUSINESS COMPUTER - TRANSLATION
- COMMUNICATION ART - GRAPHIC DESIGN
- MARKETING & ADVERTISING
- ACCOUNTING - FINANCE - COMPUTER COMMUNICATION
- ENGINEERING - COMPUTER SCIENCE

ՊԻՊԼՈՍ ՀԻՄՆԱԿԻ ՄԱՐԱՆԵՐԷՐԸ

- Ֆորմ Շրպաք - Մանք Արար: Հեռ. 01/ 293175:
- Տրաք - Տրաք շրպ: Հեռ. 01/ 894600:
- Տրաք Շրպաք - Մանք Արար: Հեռ. 01/ 273863:

**e-mail: byblos@byblosinstitute.com
www.biblosinstitute.com**

Հիւսիսարեւելեան Մասուլ

ՖԻՐԱՆՍԱԽՕՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅՈՐՈՇ ՌՐՈՇՈՒՄԸ ԹՈՒՆԿԱՆԻՆ

Արդեօք Ֆրանսախօս երկիրներու խորհրդա-
թողովը տեղի պիտի ունենայ որոշուած
թուականին, Պէյրուսի մէջ:
Հաւանական է, որ նախարարաց խորհուրդը Հինգ-
շաբթի օրուան իր նիստին խորհրդաթողովը առեւտրի
կայացնելու որոշում ընդունի կամ յետաձգէ անոր
կայացման ժամկէտը մինչեւ յառաջիկայ տարուան
Սեպտեմբերը:

Կառավարական աղբիւրներ նկատեցին, թէ եւրո-
պական եւ ալլ պետութիւններ, որոնք ամբողջու-
թեամբ կամ մասնակիօրէն Ֆրանսախօս են, համա-
ձայն են խորհրդաթողովը կայացնելու լիբանանեան
մայրաքաղաքին մէջ՝ որոշուած թուականին, մեկնե-
լով այն իրականութենէն, որ այս մէկը պիտի տայ շո-
շափելի այն փաստը, որ Ֆրանսախօս երկիրները Լի-
բանանին չեն նայիր իրեւ երկիր մը, որ կեդրոն է
«միջազգային ահաբեկչական ցանցերու», որոնց դէմ
կը պահանջուի միջազգային պայքար մղել:

Այս աղբիւրները յայտնեցին իրենց համոզումը, որ
այս կեցուածքը կ'արժանանայ Լիբանանի գնահա-
տանքին, մեկնելով այն իրողութենէն, որ ան տար-
բերութիւն կը դնէ «միջազգային ահաբեկչական ցան-
ցերու» եւ լիբանանեան հոգիներ իտարաբնական լուսն-
գրաւումէն ազատագրած դիմադրութեան դերակա-
տարութեան միջեւ:

Ըստ այս աղբիւրներու, այս խորհրդաթողովին
մասնակից երկիրները, անոր կայացման ճակատագրի-
րին դժուար, «քաղաքական գնդակ» կը նետեն «լիբա-
նանեան դաշտ», մղելով, որ լիբանանեան կառավա-

րութիւնը ընտրութիւն կատարէ հետեւեալ երկու
ընտրանքներուն միջեւ:

Առաջին ընտրանքը կը միտի խորհրդաթողովը կա-
յացնել որոշուած թուականին,

- Երկրորդ ընտրանքը կը խօսի այս խորհրդաթո-
ղովին յետաձգման Լիբանանի վրայ ունենալիք հետե-
ւանքներուն մասին, մեկնելով այն իրողութենէն, որ
այս ընտրանքին որդեկրումը ինքնաբերաբար պիտի
ստանաւորէ անոր, որ Ֆրանսախօս երկիրները այս
քայլին մէջ տեսնեն լիբանանեան պետութեան կողմէ
ապահովութեան հարցերուն կարեւորութեան շեշ-
տումը:

Սակայն ինչ որ կը տկարացնէ լիբանանեան կառա-
վարութեան կողմէ այս խորհրդաթողովին յետաձգ-
ման հաւանականութիւնը այն է, որ այս խորհրդա-
թողովին անդամ երկիրները կը նկատեն, որ իրենց քա-
ղաքականութիւնը չի հակադրուիր Լիբանանի ընկե-
րային «կառուցողական» բնոյթին հետ, այն առումով
որ այս երկիրներուն մէջ կան իսլամներ եւ քրիստոնե-
ականներ, ինչ որ խորհրդաթողովին կը հետաքննէ ընկե-
րային մէկ գոյն ունենալու երեւոյթը:

Ընդհանուր առմամբ այս աղբիւրները կը կարծեն,
թէ լիբանանեան կառավարութեան քաղաքական յար-
մար որոշում կայացնելու աշխատանքին պիտի օգնէ
միջազգային ահաբեկչութեան ցանցերուն դէմ պայ-
քարին հանդէպ միջազգային կեցուածքին զարգացու-
մը: Արդեօք այս ընտրանքը պիտի ըլլայ ի նպաստ
խորհրդաթողովին որոշուած թուականին կայացման:

ՓՈՂՈՑԻ ԵՐԵՒԱՆԵՐՈՒ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԸ ՅԵՏԱԶԳՈՒԻ

Լիբանանի դիմադրուած տնտեսական տագնապին
զուգահեռ, ի յայտ կու գայ նաեւ փողոցի երեխանե-
րուն հարցը, որ համաճարակի պէս տարածուած է
մանաւանդ քաղաքներուն մէջ, ուր անոնք կը զրա-
դին ինքնաշարժներու ապակիները սրբելով կամ ծա-
ման ծախելով: Իսկ գրեթէ ունի մէջ անոնք կը շրջին
փողոցները եւ կը թակեն դռները՝ համեստ գումար
մը մուրալու համար:

Քննարկման սեղանին վրայ դրուած հարցը այն է,
թէ այս երեխաներուն գտնուելու իրական վայրը ո՞ր
պէտք է ըլլայ: Եւ մինչ իրենց հասակակիցները աշա-
կերտական գրասեղաններուն ետեւ կը գտնուին, փոք-
րիկ թափառակները կը զրադին ուղղակի կամ ծա-
ծուկ մուրաքականութեամբ:

Ժամանակ մը առաջ Լիբանանի ներքին զործոց նա-
խարարութիւնը յայտարարած էր, թէ ինք որդեկոր-
ած է Լիբանանի մէջ մանուկներու աշխատանքին դէմ
պայքարի Աշխատանքի Միջազգային Կազմակերպու-
թեան ծրագիրը: Նախարար էլլաւ Մոր յայտարարած
էր իր զօրակցութիւնը ծրագրին, նկատի առնելով,
որ ան քաղաքակիրթ եւ մարդկային լուծում մըն է
մանուկները փողոցներէն հեռացնելու եւ անոնց անհր-
աժեշտ խնամք ապահովելու ուղղութեամբ:

Մը վերջերս տեսակցութիւն մը ունեցած է Աշխա-
տանքի Միջազգային Կազմակերպութեան արարա-
կան երկիրներու շրջանային գրասենեակի մէկ պատ-
ւիրակութեան հետ՝ քննարկելու համար Լիբանանի
մէջ երեխաներու աշխատանքին դէմ պայքարելու մի-
ջոցները:

Տեսակցութենէն ետք Մը յայտարարած էր, թէ
ծրագիրը պիտի սկսի իրագործուել 15 Սեպտեմբերին,
իսկ 16 Սեպտեմբերին լիբանանցի երեխաները պիտի
հեռացուէին փողոցներէն, անոնց պիտի ապահովուէին
աշխատանքի յարմար առիթներ քաղաքներուն եւ
գրեթէ ունի մէջ, քաղաքապետարաններու համադր-
ժակցութեամբ, անոնց սորվեցնելու համար արհեստ-
ներ, որպէսզի ապագային իրենց ապրուստը հոգան
այդ ճամբով՝ ծամոն ծախելու, մուրալու եւ ինքնա-
շարժներու ապակիները սրբելու փոխարէն: Իսկ ոչ

լիբանանցի երեխաները պիտի վերադարձուին իրենց
երկիրները եւ իրենց ընտանիքներուն, որովհետեւ
ծրագիրը կը սահմանափակուի միայն լիբանանցի երե-
խաներով:

Երեխաներուն օգնելու կողքին, ծրագիրը կ'ընդգը-
կէ նաեւ գայն իրագործելու կոչումը լոյր կառույց-
ներուն վերադարձուելու, ինչպէս՝ ներքին զոր-
ծոց ուժերը, որպէսզի երեխաներուն հետ վարուելու
համար ճիշդ ձեւը որդեկորէ: մինչ այդ զատական
ոստիկանութիւնը պէտք է տեղեկութիւններ հաւա-
քէ այդ երեխաներուն ո՞չ օրինական ձեւով աշխատեց-
նելու վայրերուն մասին:

Սեպտեմբերի 15 Սեպտեմբերին նախատեսուած ծրագրի-
րին իրագործման սկիզբը յետաձգուեցաւ: Ներքին
զործոց նախարարութեան մէկ աղբիւրը յստակա-
ցուց, թէ ծրագրին վրայ աշխատանքը կը շարունակ-
ւի, եւ նախապատրաստական աշխատանքները կը
տարուին առանց որեւէ ուշացումի, սակայն նկատի
ունենալով միջազգային կեանքը ցնցած վերջին դէպ-
քերը, որոշուեցաւ յետաձգել ծրագրին իրագործման
սկիզբը գնելու մամուլը ասուլիսը, որովհետեւ արա-
մարանական չէ այս հարցին մասին խօսիլ, մինչ ամ-
բողջ աշխարհը կը դիմադրուէ մեծ հարցեր: Կը նա-
խատեսուի, որ ծրագրին մասին յայտարարութիւնը
տեղի ունենայ այս ամսուան առաջին շաբթուան ըն-
թացքին, իսկ պատրաստութիւնները տեղի պիտի ու-
նենան ՄԱԿի եւ ԵՈՒՆԻՍԷՖի հովանաւորութեամբ եւ
այն կազմակերպութիւններու համագործակցու-
թեամբ:

Խօսելով ծրագրին իրագործման ձեւերուն մա-
սին՝ աղբիւրը բացատրեց, թէ կարելի չէ մէկ օրէն
միւսը երեխաները վերցնել փողոցներէն, այլ՝ հանգը-
ւաններով եւ ներքին ապահովութեան ուժերուն մի-
ջոցով, որոնց ներկայիս կը մարզեն զուլեյերիացի
մասնագէտներ:

ՆԻՆԱ ՌՈՒՍՈՐՈՒ

«Անուար»

«ՆՈՐ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՄԱՍԻՆ ԺՈՄՊԱՆԹԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ՓՈՐՉԱՌԱԿԱՆ ՓՈՒՉԻ՞Կ, ԹԷ ՊԱՏՐԱՍՏԻ ԾՐԱԳԻՐ

Քաղաքական եւ
խորհրդարա-
նական աղ-
բիւրներ իրենց յայտա-
րարութիւններուն մէջ
կարեւորութեամբ կանգ
առին անցեալ շաբաթա-
վերջին նախկին նախարար
Ուալիտ ժոմպլաթի կա-
տարած մէկ յայտարարու-
թեան վրայ, որ կը վերա-
բերի ներկայ կառավարու-
թեան փոփոխութեան պա-
հանջին, որպէսզի նոր կա-
ռավարութիւնը ըլլայ հա-
մապատասխան ներկայ
հանգրուանի պահանջնե-
րուն՝ շրջանային, միջազ-
գային եւ, մասնաւորա-
պէս, լիբանանեան մա-
կարդակի վրայ:

Ինչ կայ ժոմպլաթի
այդ յայտարարութեան
մէջ ներկայ կառա-
վարութիւնը, որուն մաս
կը կազմեն ժոմպլաթի
համակիր երեք նախա-
րարներ, «անանկացած է,
եւ այս կառավարութե-
նէն մաս մը վերջացած
զայցած է»: Արդեօք նախ-
կին նախարար ժոմպլաթ
կը կարծէ, թէ «միւս»
նախարարները առան-
ձին անանկացած են, թէ
անոնց մէջ կան նաեւ
ժոմպլաթի խորհրդարա-
նական իմպակցութեան
անդամներ եւս:

Ժոմպլաթ յառաջիկայ
կառավարութեան կազ-
մութիւնը զարգեալ
փոփոխեցաւ վարչապետ
Ռաֆիք Հարիրիի, սա-
կայն ան իր ունեցած յայ-
ընթացքին ներկայ կա-
ռավարութեան պատաս-
խանատուութիւնը նկա-

նալու յարգանս անոր
որուն դժուարները գոր-
ծոց նախարարը յայտա-
րարութեան հանցեւ ժո-
ղովուրդին առջեւ յանձ-
նառութիւն վերցուց:

Ամէն պարագայի,
նախկին նախարար Ուա-
լիտ ժոմպլաթի նոր կա-
ռավարութիւն կազմելու
կոչը գրաւեց քաղաքա-
կան շրջանակներուն ու-

րու տարածումը լիբա-
նանեան վարչաժողովնա-
յին մէջ, մինչ վարչական
րարեկարգումները,
որոնց մասին կառավա-
րութիւնը յաճախ խօսած
էր, կը մնան թուղթի
վրայ:

Կառավարութիւնը
խորհրդարանին եւ ժողո-
ւորդին առջեւ խոստա-
ցած էր լայն եւ մասն-
րակիր իրա քննութիւն
րանալ այն հարցին
շուրջ, որ յառաջացու-
ցած էր լիբանանցի ժողո-
ւորներու պահանջներէն,
եւ որ կը վերաբերի այն
րուութիւններուն,
որոնք տեղի ունեցան
Պէյրուսի Արդարութեան
պալատին առջեւ, ընդ-
դէմ անոնց, որոնք հա-
ւաքուած էին խաղաղօ-
վարութիւնը, որուն մաս
կը կազմեն ժոմպլաթի
համակիր երեք նախա-
րարներ, «անանկացած է,
եւ այս կառավարութե-
նէն մաս մը վերջացած
զայցած է»: Արդեօք նախ-
կին նախարար ժոմպլաթ
կը կարծէ, թէ «միւս»
նախարարները առան-
ձին անանկացած են, թէ
անոնց մէջ կան նաեւ
ժոմպլաթի խորհրդարա-
նական իմպակցութեան
անդամներ եւս:

Ժոմպլաթ յայտարա-
րութեան փորձառական
փուլի ըլլալ, թէ կառա-
վարութեան կարգ մը
անդամները անուանա-
րկելու փորձ, այնուամե-
կան ի յարգանս անոր
որուն դժուարները գոր-
ծոց նախարարը յայտա-
րարութեան հանցեւ ժո-
ղովուրդին առջեւ յանձ-
նառութիւն վերցուց:

Ամէն պարագայի,
նախկին նախարար Ուա-
լիտ ժոմպլաթի նոր կա-
ռավարութիւն կազմելու
կոչը գրաւեց քաղաքա-
կան շրջանակներուն ու-

րու տարածումը լիբա-
նանեան վարչաժողովնա-
յին մէջ, մինչ վարչական
րարեկարգումները,
որոնց մասին կառավա-
րութիւնը յաճախ խօսած
էր, կը մնան թուղթի
վրայ:

Կառավարութիւնը
խորհրդարանին եւ ժողո-
ւորդին առջեւ խոստա-
ցած էր լայն եւ մասն-
րակիր իրա քննութիւն
րանալ այն հարցին
շուրջ, որ յառաջացու-
ցած էր լիբանանցի ժողո-
ւորներու պահանջներէն,
եւ որ կը վերաբերի այն
րուութիւններուն,
որոնք տեղի ունեցան
Պէյրուսի Արդարութեան
պալատին առջեւ, ընդ-
դէմ անոնց, որոնք հա-
ւաքուած էին խաղաղօ-
վարութիւնը, որուն մաս
կը կազմեն ժոմպլաթի
համակիր երեք նախա-
րարներ, «անանկացած է,
եւ այս կառավարութե-
նէն մաս մը վերջացած
զայցած է»: Արդեօք նախ-
կին նախարար ժոմպլաթ
կը կարծէ, թէ «միւս»
նախարարները առան-
ձին անանկացած են, թէ
անոնց մէջ կան նաեւ
ժոմպլաթի խորհրդարա-
նական իմպակցութեան
անդամներ եւս:

Ժոմպլաթ յայտարա-
րութեան փորձառական
փուլի ըլլալ, թէ կառա-
վարութեան կարգ մը
անդամները անուանա-
րկելու փորձ, այնուամե-
կան ի յարգանս անոր
որուն դժուարները գոր-
ծոց նախարարը յայտա-
րարութեան հանցեւ ժո-
ղովուրդին առջեւ յանձ-
նառութիւն վերցուց:

Ամէն պարագայի,
նախկին նախարար Ուա-
լիտ ժոմպլաթի նոր կա-
ռավարութիւն կազմելու
կոչը գրաւեց քաղաքա-
կան շրջանակներուն ու-

ԺՈՐԺ ՊԵՇԵՐ

«Տիւր»

www.homenetmencentral.com

La lumière en privilège

G. AYANIAN & SONS

Dora, (01) 255222/3/4/5/6 - Gemmaye, (01) 447000-445396 - (05) 627728/9, Fax: (01) 263187-582397

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վարժարանի Տնօրէնութիւնը կը տեղեկացնէ

Իր Տնողներուն Թէ՛

Արձանագրութիւնները կը սկսին Երկուշաբթի 3 Սեպտեմբերէն սկսեալ, ամէն օր բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Իր նորեկ աշակերտներուն

- Ներկայացնել ինքնութեան թուրքի լուսապատճէն, նախկին վարժարանէն պետական փոխանցագիր եւ Վիճակացոյց ինչպէս նաեւ 2 լուսանկար:

- Մանկամտերի բաժինը կ'ընդունի 2 տարեկանէն վեր պարուն փոքրիկները:

- Ցառաչիկալ կրթական տարեշրջանին, Պաշտօնագրի աւարտական դասարանին համար կը շարունակուին հետեւեալ 3 մասնագիտութիւնները:

1 - Lettres et Humanités
2 - Sciences de la vie
3 - Sciences générales

- Աշակերտութեան փոխադրութիւնը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:

Պորժ Համուտ, Արաքս փողոց, Հեն: 01 - 260 504, Զաքս: 01 - 262 955
E-mail: mesrobca@dm.net.lb
Web Site: www.mesrobian.com

Վերամուտի Թուականներ

Երեքշաբթի, 25 Սեպտեմբեր
Միջնակարգ եւ Երկրորդական:

Երկուշաբթի, 1 Հոկտեմբեր
Նախակրթարան:

Երկուշաբթի, 8 Հոկտեմբեր
Մանկապարտեզ եւ Մանկամտեր:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ



Կնոջական

ԿԻՆ ԴԵՍԵՐ

ԼԷԱ ՊՈՒԹՐՈՍ ՂԱԼԻ

Լեա Նատեր, հա-
րուստ գործատերի մը
աղջիկը, ծնած է Ադեք-
սանդրիա, ապա ամուս-
նանալով երեւելի իրա-
ւաբան տոքթ. Պուրոս
Ղալիի հետ՝ հաստատ-
ւած է Կիզէ եւ այդ օրէն
բաժնած է իր ամուսի-
նին քաղաքական քե-
ղուն կեանքը:

Եգիպտոսի արտա-
քին գործոց նախարար,
ապա ՄԱԿի ընդհանուր
քարտուղար եւ, վերջա-
պէս, Ֆրանքոֆոն եր-
կիրներուն միջազգային
կազմակերպութեան
ընդհանուր քարտուղար
Պուրոս Ղալիի կնոջ
երբ կ'ըսուի, թէ՝ «Իւրա-
քանչիւր մեծ մարդու
ետին կին մը կանգնած
է», ան համեստօրէն կը
պատասխանէ. «Իմ
դերս եղած է սպասել,
դարձեալ սպասել,
միշտ սպասել...»:

Լ ի բ ա մ ց ե ա
«Ֆամ» ամսաթերթը
հարցազրոյց մը ունե-
ցած է այս համեստ եւ
լուսարձակներէ հեռու
մնացող կնոջ հետ, ստո-
րեւ թարգմանաբար կու
տամք հարցազրոյցէն
բաժիններ:

- Ամուսնացաք երեւե-
լի իրաւաբան եւ համալր-
ստաբիլ գասախօսի մը
հետ: Յակարծ 1977ին
Պոթրոս Ղալիին նշա-
նաւորութիւն գործոց նա-
խարար: Իր աշխատանքը

պաշտօնը որեւէ
անգործարար ու-
նեցա՞նք ձեր
կեանքին վրայ:

ԼԷԱ ՂԱԼԻ.-
Բնականաբար,
բայց արդէն ան-
քաղաքական
գործունէութիւն
ունէր եւ օրական
10 ժամ կ'աշխա-
տէր: Անշուշտ
նախարար նշա-
նակութեան հետք
ստեղծուեցան
նոր դժուարու-
թիւններ, որոնց
փոխարէն, սա-
կայն շահեցանք
հետաքրքրական
նոր փորձառու-
թիւններ:

- Եգիպտոսի մէջ ի՞նչ
են նախարարի մը կնոջ
պարտաւորութիւնները:

ԼԷԱ ՂԱԼԻ.- Պարտա-
ւորութիւններս շատ էին
եւ աշխատանք: Դեռանա-
լիքներուն կիներով
զրադիւր, բարեփոխու-
ման գործերու ճամբով օգնել
աղքատներուն եւ ծերե-
